

ՀԱՐՑՈՒՊԱՏԱՍԽԱՆԻ ԺԱՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «ԵԹԵ ԵՎՐՈՊԱՆ ԻՐԱԿԱՆՈՒՄ ՑԱՆԿԱՆՈՒՄ Ե ԲԵՎԵՌԱՅՄԱՆ ՎԵՐԱՅՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆԻՆ ՊԵՏՔ Ե ԸՆՈՐՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ»

ՄԵՐ ԸՆՈՐՀԻՎ Ե, ՈՐ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՆ ԱՅՍՕՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԱՑԱԾ ԵՐԿՐՈՒՄ

Երեկ՝ մարտի 24-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիքաշվիլին, հարցուպատասխանի կարգով, հաշվետվությամբ հանդես եկավ երկրի խորհրդարանում:

Իր խոսքում, Վրաստանի վարչապետն անդրադարձավ երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակին, գլոբալ տնտեսական ճգնաժամի պայմաններում գործադիր իշխանության ձեռնարկած միջոցառումներին, երկրի առջև ծառայած մարտահրավերներին, եվրախնտեզրման ուղղությամբ իրականացված քայլերին, Վրաստանի արտաքին և ներքին քաղաքական կուրսի մանրամասներին:

Խոսելով եվրախնտեզրման հեռանկարների, եվրահամեմատողովի 12 համեմարարականների կատարման ուղղությամբ իրականացված աշխատանքի մասին, վարչապետը նշեց, որ «Վրացական երազանքի» ծառայությունն է, որ այսօր երկրի քաղաքացիները կարող են առանց



այցեգրի լինել եվրամիության ցանկացած երկրում: - Ապակառուցողական ընդդիմությունը շատ մեծ (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԾՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՍԱՎՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՄՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Մարտի 19-ին, Բորժոմիում կայացավ խորհրդարանական մեծամասնության և Վրաստանի կառավարության անդամների հանդիպումը, որտեղ քննարկվեցին երկրում ստեղծված իրավիճակի և առաջիկայում գործողության ծրագրի հետ առնչվող հարցեր:

Հանդիպմանը մասնակցեցին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիքաշվիլին, «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն, խորհրդարանի նախագահ Շավլա Պապուաշվիլին, կառավարող կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն, գործադիր քարտուղար Մամուկա Մոխիարաձեն, խորհրդարանական մեծամասնության ու նախարարների կաբինետի ան-



դամներ: Հիշեցնենք, որ վերոնշյալ հանդիպումը հաջորդեց «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքի շուրջ ծավալված իրա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՐԱԿԼԻ ԿՈՒՐԱՆԻՉԵ. «ԹԻՄՈՒՄ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

ԱՐՏԱՅԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՆ ԼԻՆԻ

Բորժոմիում, խորհրդարանական մեծամասնության և կառավարության անդամների հանդիպման ավարտից հետո, «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձենը քննարկեց թիմի ներսում որոշակի փոփոխությունների հավանականությունը:

- Բնականաբար, փոփոխություններ կլինեն, սակայն դրանք կլինեն թիմի շրջանակներում: Այսօր կոնկրետ ոչինչ ասել չեմ կարող, թեպետ նշեմ, որ Իրակլի Կով-

զանաձեն, որը թողնում է պատգամավորական մանդատը, վերադառնում է թիմին գործողության: Ինչ վերաբերում է մյուս փոփոխություններին, ապա դրանք (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՆԱՐՅՈՒՄ ՄԵԾՆ ԼՈՒԵՑՈՒ ԶԻՇԱՏԱԿԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍԵՂԾԻ ՄԱՐԿԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆԿԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Մարտի 23-ին և 24-ին Թբիլիսիում անցկացվեցին հիշատակի միջոցառումներ՝ նվիրված Ամենայն Հայոց Բանաստեղծ Հովհաննես Թումանյանի մահվան 100-րդ տարելիցին:

ԽՈՋԻՎԱՆՔԻ ՊԱՆԹՈՆ. ԾԱՂԻԿՆԵՐ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՇԻՐՄԻՆ

Հորեյանական երկրյան մեկնարկեց Թբիլիսիի Հայ գրողների և հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում, ուր հանգչում է Մեծ բանաստեղծը: Ներկաները մասնակցեցին Կիրահայոց թեմի առաջնորդ Կիրակոս

վարդապետ Դավթյանի մատուցած հոգեհանգստյան կարգին: Իսկ Թումանյանի շիրմին նորից ծաղիկներ խոնարհվեցին, նորից խուճկ ծխաց ու նորից Մեծն Լոռեցու անմահ քառատողերը հնչեցին հենց այն տեղում, ուր 100 տարի առաջ ժամանակի հայ ու վրաց ռաիվիրաները՝ գրողներն ու լուսավորիչները,

նկարիչները, դրամատուրգները, դերասաններն ու երաժիշտները ճանապարհում էին հայ ու վրաց հողի մեծամուն գավակին՝ իրենց խոսքն ուղղելով հայ ու վրացի ժողովուրդների մեծեցման ամենամեծ ջատագովին:

ԲԱՑՎԵՑ «ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԹԻՖԼԻՍԸ» ՑՈՒՑԱՅԱՆՂԵԱԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՕՐԸ ՀԱՐՈՆԱԿՎԵՑ ԹԲԻԼԻՍԻԻ Գ.ԼԵՈՆԻԺԵԻ ԱՆՎԱՆ (Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԳԻՈՐԳԻ ՇԱՐՎԱՇԻՉԵՆ ՀԱՆԴԻՊԵՑ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԵՏ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՄՊԱՆԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Մարտի 24-ին, Հայաստանում Վրաստանի նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Գիորգի Շարվաշիձեն հանդիպում ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:

Ճանաչողական բնույթ կրող հանդիպմանը՝ Հայաստանի վարչապետն առաքելության մեկնարկի առիթով շնորհավորեց վրաց դիվանագետին և համոզմունք հայտնեց, որ նա իր գործունեությամբ կխթանի հայ-վրացական փոխհարաբերությունների հետագա զարգացումը: Գոհունակություն հայտնելով Հայաստան-Վրաստան համագործակցության ընթացքից՝ Նիկոլ Փաշինյանը կարեւորեց տնտեսական կապերի առավել ընդլայնումը և առկա ներուժի լիարժեք իրացմանն ուղղված նախաձեռնությունները:

Իր հերթին Վրաստանի նորանշանակ դեսպանը հավաստիացրեց, որ պաշտոնավարման ընթացքում կներդնի առա-



վելագույն ջանքեր՝ ի նպաստ վրաց-հայկական կապերի առավել սերտացման:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին համագործակցության հեռանկարների, հումանիտար կապերի ամրապնդման վերաբերյալ:

Երկուստեք կարեւորվեց տարածաշրջանային կայունությունն ու խաղաղությունը:

ԳԻՈՐԳԻ ՇԱՐՎԱՇԻՉԵ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԴժՎԱՐ Ե ՊԱՏԿԵՐԱՅՆԵԼ ԱՌԱՅՉ ՀԱՅՎԱԿԱՆ ՀԱՐՈՒՄՍ ՄՇԱԿՈՒԹԻ»

Հայաստանում Վրաստանի նորանշանակ դեսպան Գիորգի Շարվաշիձեն հանդիպում ունեցավ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի հետ:

Հանդիպմանը Ալեն Սիմոնյանը մեծապես կարեւորեց Վրաստանի հետ հարաբերությունները և, որ՝ Հայաստանը հետաքրքրված է Վրաստանի հետ ռազմավարական գործընկերության հաստատմանն ուղղությամբ:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց բարեկամ երկրների օրենսդիր մարմինների միջև հաստատված սերտ համագործակցությանը:

Վրաստանի դեսպանը նշեց, որ Հայաստանն իր համար հարազատ երկիր է՝ հիշատակելով մանկության տարիներին մի բակում ապրող վիրահայ ընկերներին: Նա ընդգծեց, որ Վրաստա-



նը դժվար է պատկերացնել առանց հայկական հարուստ մշակույթի:

Հայաստանում Վրաստանի նորանշանակ դեսպանը ճանաչողական հանդիպումներ ունեցավ նաև Հայաստանի առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի, ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի հետ:



ԱՎԱՆԴՈՒՅՑ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ ՆՈՎՐՈՒՋ ԲԱՅՐԱՄԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, երկրի մահմեդականներին, որոնք բնակվում են Աջարիայի, Քվեմո Զարթլիի, Կախեթի երկրամասերում, շնորհավորեց Նովրուզ Բայրամի առիթով:

Կառավարության ղեկավարը այդ օրը Մառնեուլիում ներկա գտնվեց Նովրուզ Բայրամին նվիրված հանդիսավոր միջոցառումներին:

Վարչապետը, Հաշտեցման եւ հավասարության հարցերով պետ-նախարար Թեա Ավալեդիանու, կառավարության վարչակազմի տարածաշրջանների հետ կապերի վարչության պետ Լերի Բարնաբիշվիլու, Քվեմո Զարթլիի նահանգապետ Գիորգի Դոխտուրաշվի-

լու, Մառնեուլիի քաղաքապետ Քեման Օմարովի, Մառնեուլիի սակրեբուլոյի նախագահ Ամիրան Գիորգաձեի, խորհրդարանի պատգամավորներ Զաուր Դարգալի եւ Սավալան Միրզոբեի, Ադրբեջանի ղեսպան Ֆաիզ Գուլիեի ուղեկցությամբ, մասնակցեց տոնական միջոցառումներին, զրուցեց տեղի բնակիչների հետ:



ՀԱԱԳԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՊՈՒՏԻՆԻՆ ԶԵՐԲԱՎԱԼԵՆՈՒ ՕՐԴԵՆ Ե ԱՐՉԱՎԵԼ

Հասագայի Միջազգային քրեական դատարանը Վլադիմիր Պուտինին ձերբակալելու օրդեր է արձակել: Միջազգային քրեական դատարանի դատավորների որոշմամբ՝ Ռուսաստանի նախագահը կասկածվում է Ուկրաինայում ռազմական հանցագործություններ կատարելու մեջ:

Դատարանի հայտարարության համաձայն՝ Ռուսաստանի նախագահը «ենթադրաբար պատասխանատու է ռազմական հանցագործությունների, բնակչության (երեխաների) անօրինական տեղահանման եւ Ուկրաինայի օկուպացված տարածքների բնակչության (երեխաների) անօրինական տեղափոխման համար Ռուսաստանի Դաշնություն»:

Նման մեղադրանքով դատարանը նաեւ ձերբակալության օրդեր է տվել երեխաների իրավունքների հարցերով ՌԴ հանձնակատար Մարիա Ալեքսեևնա Լվովա-Բելովային:

Նշենք, որ Հունգարիան արգելակեց Հասագայի դատարանի որոշման կապակցությամբ եվրամիության երկրների ընդունած համատեղ հայտարարությունը:

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ՉԻՆԱՍՏԱՆ ՄԻ ԾԻՆՓԻՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԻՆ ԱՏՈՐԱԳՐՎԵԼ ԵՆ ՈԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Մարտի 20-22-ին, պետական այցով, Մոսկվայում էր գտնվում Չինաստանի նախագահ Սի Չինփինը: Ռուսաստանը դարձավ առաջին երկիրը, որտեղ այցելեց Սի Չինփինը՝ մարտի 10-ին Ազգային ժողովրդական Կոնգրեսի (խորհրդարանի) կողմից երրորդ ժամկետով վերընտրվելուց հետո:

Բարձր մակարդակի բանակցությունների արդյունքներով հրապարակվել է Ռուսաստանի Դաշնության եւ Չինաստանի համատեղ հայտարարությունը՝ համապարփակ գործընկերության եւ ռազմավարական փոխգործակցության հարաբերությունների խորացման մասին, որոնք թեւակոխում են նոր դարաշրջան:

Պուտինի հետ ոչ պաշտոնական հանդիպման ժամանակ՝ Չինաստանի ղեկավարը ռուս պաշտոնակցին հրավիրել է 2023 թվականին այցելել Չինաստան:

ՖՐԱՆՍԻԱ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՎԵՑ, ԲԱՅՑ ՑՈՒՅՑԵՐԸ ՇԱՐՈՒՆԱՎՈՐ ԵՆ

Ֆրանսիայում տասնյակ մարդիկ են ձերբակալվել մի շարք քաղաքներում տեղի ունեցած ցույցերի ժամանակ: Ցույցերին նախորդել էր խորհրդարանում քվեարկությունը, որի արդյունքում նախագահ Էմանուել Մակրոնի կառավարությանը հաջողվեց խուսափել անվստահության քվեից:

Կառավարությանը անվստահություն հայտնելու օգտին է քվեարկել 278 պատգամավոր, դեմ՝ 287-ը: Ֆրանսիացիները զանգվածային բողոքի ակցիաներ են անցկացրել կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի դեմ, որը նախատեսում է կենսաթոշակային տարիքը 62-ից հասցնել 64-ի:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԵՂԾՎԵՆ ԱՐԱԳ ԱՐՉԱԳԱՆՔՄԱՆ ՈՒՇԵՐ

Ինչպես հայտարարեց եվրամիության արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով բարձր հանձնակատար ժոզեպ Բորելը, Միությունը, վերջին 12 ամսվա ընթացքում, առաջընթաց է գրանցել արագ արձագանքման ուժերի ստեղծման հարցում, որի ստեղծման գործընթացը պետք է ավարտվի մինչև 2025 թվականը:

ԱՅՑ

ԱՆՆԱԼԵՆԱ ԲԵՐԲՈՔ. «ԳԵՐՄԱՆԻԱՆ ԱԶԱԿՈՒՄ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՇՆՈՒՆԿԱՐԻՆ»



Մարտի 24-25-ին, իր առաջին պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Գերմանիայի արտաքին գործերի նախարար Աննալենա Բերբոքը:

Այցի շրջանակներում, Գերմանիայի արտաքին գործերի նախարար Աննալենա Բերբոքը՝ հանդիպում ունեցավ Վրաստանի կառավարության ղեկավար Իրակլի Դարիբաշվիլու եւ Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու, իր վրացի գործընկեր Իլիա Դարչիաշվիլու հետ: Աննալենա Բերբոքն այցելեց նաեւ օկուպացիոն գիծ եւ տեղում ծանոթացավ իրավիճակին:

Հանդիպումներում կողմերը քննարկե-

ցին եվրահանձնաժողովի 12 հաձնարարականների կատարման ընթացքը, Եվրամիությանը Վրաստանի անդամակցության հեռանկարները: Վրացական կողմը կրկին ընդգծեց եվրաինտեգրման կուրսին հավատարմությունը: Իր հերթին Աննալենա Բերբոքը նշեց, որ Բեռլինն ամուր կանգնած է վրաց ժողովրդի կողքին, որը հանդես է գալիս հօգուտ եվրոպական ինտեգրման եւ դեմ է Մոսկվայի հետ մերձեցմանը:

ԾՐԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵՅԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դարձություններից մեկ շաբաթ անց:

Հատկանշական է, որ հանդիպմանը չէին մասնակցում կառավարող թիմի այնպիսի ճանաչված ներկայացուցիչներ, ինչ-

պիսիք են Դավիթ Սերգենկոն, Վլադիմիր Չաչիբախան, Գիորգի Խելաշվիլին, Իրակլի Կովալանաձեն, Նինո Իրբաշվիլին: Բացակայում էր նաեւ կրթության նախարար Սիլվեստր Զիսենկելին:

Ինչպես հանդիպման ավարտից հե-

տո հայտարարեց Իրակլի Կոբախիձեն՝ կառավարող թիմն առաջիկայում ծրագրում է կադրային փոփոխություններ ինչպես կառավարության կազմում, խորհրդարանական մեծամասնությունում, այնպես էլ՝ կուսակցության ներսում:

ԻՐԱՎԼԻ ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կընդունվեն երկկողմ խորհրդատվությունների արդյունքում, որի մասին հանրությանը կտեղեկացնենք,- հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

Իրակլի Կոբախիձեն անդրադարձավ նաեւ արտաքին գործերի ընտրությունների թեմային եւ ընդգծեց, որ եթե ինչ-որ մեկը

չի կազմակերպում արտաքին ընտրություններ, այդ թվում՝ հաշվի առնելով ընտրական համակարգը եւ երկամյա պաշտոնավարման ժամկետը, ինչպես նաեւ վարկանիշները, դա հենց արմատական ընդդիմությունն է:

- Իրենք լավ գիտեն, որ արտաքին ընտրություններ չեն լինելու: Ընտրություններ կանցկացվեն սահմանադրական

ժամկետներում՝ 2024 թվականի հոկտեմբերին: Մի քանի ամսից պետք է սկսել խորհրդարանական ընտրությունների նախապատրաստական աշխատանքները: Ինքնավստող հռետորաբանության փոխարեն, նրանց խորհուրդ է տալիս կենտրոնանալ խորհրդարանական ընտրությունների վրա,- ասաց Կոբախիձեն:



39-ԱՄՅԱ ԳԻՐԳԻ ԱՄԻԼԱԽՎԱՐԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐ



Մարտի 20-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին հանրությանը ներկայացրեց Վրաստանի կրթության եւ գիտության նոր նախարար Գիորգի Ամիլախվարիին, ով մինչ այդ զբաղեցնում էր Վրաստանի խորհրդարանի կրթության եւ գիտության հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

Նրա խոսքով՝ կրթության եւ գիտության նախկին նախարար Սիլվեստր Զիսենկելին իր ցանկությամբ է ազատվել զբաղեցրած պաշտոնից:

- Նա իրականացրել է բազմաթիվ կարևոր ծրագրեր, հիմք դրել բազմաթիվ բարեփոխումների: Դա Սիլվեստր Զիսենկելու որոշումն ու ցանկությունն էր՝ վերադառնալ իր ակադեմիական գործունեությանը: Զիսենկելին կշարունակի իր

աշխատանքը Քութայիսիի միջազգային համալսարանում՝ որպես միջազգային խորհրդատվական խորհրդի նախագահ: Մեր թիմի՝ կառավարության անունից ցանկանում են շնորհակալություն հայտնել Սիլվեստր Զիսենկելուն՝ աշխատանքի համար եւ հաջողություն մաղթել նրան հետագա աշխատանքում,- ասաց Իրակլի Դարիբաշվիլին՝ վստահություն հայտնելով, որ Գիորգի Ամիլախվարին հաջողակ նախարար կլինի:

39-ամյա Գիորգի Ամիլախվարին մաս-

նագիտությամբ իրավաբան է, իրավագիտության դոկտոր: Եղել է Կրթական ծրագրերի հավատարմագրման խորհրդի նախագահի տեղակալ, Թբիլիսիի բաց համալսարանի պրոֆեսոր, ռեկտոր, աշխատել է Վրաստանի պետնախարարի աշխատակազմում՝ որպես եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման հարցերով գլխավոր մասնագետ: 2021 թվականից Գիորգի Ամիլախվարին Վրաստանի խորհրդարանի կրթության եւ գիտության հանձնաժողովի նախագահն է:

ԻՐԱՎԼԻ ԿՈՎՉԱՆԱՋԵՆ ԹՈՂԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԸ, ՎԱՅՐ ԴՐԵՑ ԴԱՏԱՎԱՎՈՐԻ ՄԱՆԴԱՏԸ

Վրաստանի խորհրդարանի «Վրացական երազանք» խմբակցության անդամ Իրակլի Կովալանաձեն դիմել է խորհրդարանի բյուրոյին, Ֆինանսաբյուջետային հանձնաժողովի նախագահի պաշտոնից հրաժարական տալու համար:

Միաժամանակ, նա վայր է դնում պատգամավորական մանդատը:

Ավելի ուշ, խորհրդարանի

նի լիագումար նիստում, ընդունվել է Ֆինանսաբյուջետային հանձնաժողովի նախագահությունից Իրակ-

լի Կովալանաձեի հրաժարականի մասին հայտարարությունը:

Տարածված տեղեկատ-

վության համաձայն՝ Իրակլի Կովալանաձեն իր գործունեությունը կշարունակի ձեռներեցության ոլորտում:

ՀԱՐՑՈՒՊՈՍԱՍԽԱՆԻ ԺԱՄ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԵՌԵՎԱՆԻ ԻՐԱՎԱՆՈՒՄ ԶԱՆԿԱՆՈՒՄ Է ԲԵՎԵՌԱՅՄԱՆ ՎԵՐԱՅՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆԻՆ ՊԵՏԷ Է ՇՆՈՐՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ»

(Սկիզբը՝ 1-ին էջում) Ղարաբաղյանը և ներկայացնում կառավարությանը, թեպետ ցանկանում են հիշեցնել այն, ինչ արվել է մեր կառավարման օրոք: Մենք ընդլայնեցինք ասոցիացիան համաձայնագիրը, ազատ առևտրի պայմանագիրը, ստացանք անայցեգրային պայմանակարգ: Յենց մեր ծառայությունն է, որ մեր քաղաքացիները կարող են լինել Եվրամիության ցանկացած երկրում՝ առանց որևէ արգելքի, - հայտարարեց վարչապետը:

Անդրադառնալով քաղաքական բեռնացման թեմային, վարչապետն առանձնակի ընդգծեց Եվրամիության դերը քաղաքական բեռնացման վերացման կամ քաղաքական լարվածության մակարդակի նվազեցման հարցում, նշելով, որ քաղաքական բեռնացման վերացման լավագույն միջոցը Եվրամիության կողմից Վրաստանին թեկնածուի կարգավիճակի շնորհումն է, որին, ըստ վարչապետի, Վրաստանը վաղուց արժանի է:

Անդրադառնալով ներկա քաղաքական լարված իրավիճակին, վարչապետը նշեց, որ աշխարհը կանգնած է երրորդ համաշխարհային պատերազմի սպառնալիքի առջև և նման պայմաններում կառավարության գլխավոր հոգսը՝ Վրաստանի փրկությունն է:

Խորհրդարանի իր ելույթում, Իրակլի Ղարաբաշվիլին խոսեց նաև վերջին տարիներին երկրի տնտեսական առաջընթացի մասին, նշելով, որ կորոնավիրուսի համավարակի պայմաններում անգամ, երկիրը կարողացավ պահպանել տնտեսական ներուժը և համավարակի վերացումից հետո, այն հասավ երկնիչ տնտեսական աճի և տնտեսական առաջընթացի միտումն այսօր էլ շարունակվում է: Վարչապետի հավաստմամբ, տնտեսական հաջողություններն անվերապահորեն կանդրադառնան երկրի բնակչության տնտեսական վիճակի վրա: Արդեն այսօր, կառավարությունը կոնկրետ քայլեր է ձեռնարկում առաջին իսկ սպառման ապրանքների՝ վառելիքային և դեղորայքի գների նվազեցման մեխանիզմների մշակման ուղղությամբ և պետք է ասել, որ գրանցվել է որոշակի հաջողություն: ընդգծեց վարչապետը և հավելեց, որ չնայած այդ ամենին, հարկ է առավել նշանակալի ուշադրություն դարձնել սոցիալական պայմանների բարելավման հարցին:

Իր խոսքում, վարչապետն անդրադարձ կատարեց նաև Վրաստանում ընթացքի մեջ գտնվող և իրականացվելիք սոցիալական, տնտեսական, ենթակառուցային ծրագրերին:

ՕՐԵՆԱԴԻՐ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՊԱՇՏՊԱՆԵՑ «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԱԳՐՔԻ» ՆԱԽԱԳԻԾԸ

Մարտի 21-ին, Վրաստանի խորհրդարանը, սկզբունքների մակարդակով, քննարկեց կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված «Պաշտպանության օրենսգրքի» նախագիծը:

«Պ ա շ տ պ ա ն ու թ յ ա ն օրենսգրքի» նախագիծը, որը լիազույնար միատուն քննարկման ներկայացրեց պաշտպանության փոխնախարար Գրիգոր Գիորգաձեն, մշակվել է պաշտպանության ուժերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու և պաշտպանության դաշտում միասնական կողովորված իրավական ակտ նախապատրաստելու նպատակով:

Ըստ բանախոսի՝ «Պաշտպանության օրենսգրքի» նախագիծով նորովի կկարգավորվեն նախարարության կազմակերպման, գործունեության և զինծառայության հարցերը: Օրենսգրքը կենտրոնացած է պաշտպանության նպատակներին հարմարեցված զինծառայության նոր կանոնների վրա և պաշտպանության նախարարության համակարգում զբաղված անձանց սոցիալական

երաշխիքների բարելավմանը: Կարևոր է, որ զորակոչիկների ազգային զինծառայությունը հնարավոր լինի միայն նախարարության համակարգում:

Փոփոխությունների նախագիծը նախատեսում է զինվորական ծառայության հետաձգման միանվագ հնարավորություն, ինչպես նաև՝ այլընտրանքային զինծառայության պայմաններ:

Նորույթ է բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողի՝ ժամկետային ազգային զինծառայություն անցնելու հնարավորությունը:

Խորհրդարանի «Գիրչի» քաղաքական խմբի համաձայնական պատգամավոր Ալեքսանդր Ռաքվիաշվիլին, լիազույնար միատուն, ներկայացրեց այլընտրանքային օրենսդրական փաթեթ՝ պաշտպանության օրենսգրքի նախագիծը:

Ի վերջո, խորհրդարանի որոշմամբ, քվեարկության արդյունքում, օրենսդրական փաթեթը կվերանայվի կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացված նախագծի հիման վրա, որին կողմ է քվեարկել 69 պատգամավոր:

ՄԱՍՈՒԿԱ ՄԴԻՆԱՐԱԶԵ. «ՄԵՐ ԸՆԴՊԻՄԱՍՏՈՆԵՐԸ ՆԱԽԸՆՏՐՈՒՄ ԵՆ ՎԻՐԱՎՈՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ»

Մարտի 22-ին, Վրաստանի խորհրդարանի լիազույնար միատուն, խորհրդարանական ընդդիմության պատգամավորների ու «Ժողովրդի ուժ» շարժման անդամների միջև տեղի ունեցավ բանավոր և ֆիզիկական դիմակայություն:

Միջադեպը սկսվեց ազգայնական պատգամավոր Տարիել Նակաիձեի և Սոզար Սուբարիի խոսակցությունից, որը շարունակվեց միմյանց վրա խոսափող նետելով:

Մեկնաբանելով տեղի ունեցածը՝ «Վրացական երազանք» խմբակցության նախագահ Մամուկա Մդինարաձեն նշեց, որ

տեղի ունեցածը տհաճ միջադեպ է:

- Ըստ երեւույթին, մեր ընդդիմախոսները, իրենց վարքագծի տրամաբանական բացատրության փոխարեն, նախընտրում են դիմել վիրավորանքների և ֆիզիկական դիմակայության, ինչն անընդունելի է, - հայտարարեց Մամուկա Մդինարաձեն:



«ԱՊՈԼԻԳՐԻՄԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՆ

Մարտի 21-ին Վրաստանի խորհրդարանը, երկու ընթերցմամբ ընդունված «Ապաօլիգարիացման մասին» օրենքի նախագիծը, լիազույնար միատուն ընդունված որոշմամբ, վերադարձրեց քննարկման՝ երկրորդ ընթերցմամբ:

Ինչպես ասաց գեկուցող, իրավաբանական հարցերի կոմիտեի նախագահ Անրի Օխանաշվիլին՝ դրա պատճառը Վենետիկի հանձնարարականները կոմիտեի միտումնաբերական քննարկումն է, որը կապված է ապաօլիգարիացման հարցերի հետա-

գա պարզաբանման հետ: - Մեր խնդիրն է՝ շարունակել քննարկել այդ եզրակացությունները և հանձնարարականները կոմիտեի միտումնաբերական քննարկումն է, որը կապված է ապաօլիգարիացման հարցերի հետա-

ժողովի գնահատմամբ, լրացուցիչ պարզաբանման և անցկացման կարիք ունեն: Ըստ այդմ, մենք որոշել ենք այն չքննարկել երրորդ ընթերցմամբ և հաջորդ լիազույնար միատուն ներկայացնել շտկված տարբերակը, ասաց Անրի Օխանաշվիլին:

Նշենք, որ ապաօլիգարիացումը Վրաստանին Եվրամիության թեկնածուի կարգավիճակ տալու 12 առա-

ջարկներից մեկն է:

Հիշեցնենք՝ Վենետիկի հանձնաժողովը կտրակա-նապես չի մերժում «անձնական մոտեցման» բոլոր տարրերը, սակայն նշում է, որ նման մոտեցումը պահանջում է ուժեղ ընթացակարգային երաշխիքներ՝ կանխելու համար մարդու իրավունքների և օրենքի գերակայության խախտումները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՅՑ ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ՉԻ ԹԱՆԿԱՆԱ, ԹԵՊԵՏ ՉԻ ԷԼ ԷԺԱՆԱՆԱ

Ներկա դրությամբ Վրաստանում, հացամթերքների գների տեսանկյունից, իրավիճակը կայուն է, և այն չի խախտվի նաև առաջիկա ամիսների ընթացքում: Ոլորտի մասնագետների հավաստմամբ, առաջիկայում գների ավելացում չի սպասվում, թեև չի վավերացվի նաև հացամթերքի գնի նվազեցում:

Ինչպես նշեց Վրաստանում հատիկայինների արտադրության ասոցիացիայի ղեկավար Լեւան Սիլագավան՝ այլուրի ներկրման հարցում հիմնախնդիրներ գրեթե չկան, ինչը հնարավոր չէ ասել հատիկայինների ներկրման հարցի վերաբերյալ: - Թեպետ որոշակիորեն հանգստացնում է այն հանգամանքը, որ գյուղատն-

տեսական ոլորտի մասնագետների կանխագծումներով, այս տարի կստացվի հատիկայինների բարձր բերք, ինչն էլ թույլ կտա նվազագույնի հասցնել պահանջարկի պակասորդը: - Նշեց Լեւան Սիլագավան և հավելեց՝ բացառված չէ, որ երկիրը, ընդհանրապես, հրաժարվի հատիկայինների ներկրումից, քանի որ Ռուսաստանից ներկր-

վող էժան ալյուրը լրիվությամբ բավարարում է երկրի բնակչությանը հացամթերքով անխափան մատակարարելու համար: Ինչպես տեղեկացրեց Լեւան Սիլագավան՝ անցյալ տարի Վրաստանում ստացվել է 160 հազար տոննա հացահատիկ: Վրաստանում բերքատվությունը, հեկտարի հաշվով, կազմում է 2,8 տոննա, այն ժամանակ, երբ Եվրոպայում այդ ցուցանիշը հասնում է 9 տոննայի: Վրաստանում, հեկտարի հաշվով, ստացվում է 2,1 տոննա գարի՝ եվրոպական երկրների միջին 7 տոննա ցուցանիշի համեմատ:

ԿԵՆՍԱԱՊԱՐՈՎՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆՎԱՋԵԼ Է

Վրաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, 2023 թվականի փետրվարին, հունվար ամսվա համեմատ, կենսաապահովման մակարդակը նվազել է 50 թերթով:

Տվյալների համաձայն, փետրվարին աշխատունակ տարիքի տղամարդու կենսաապահովման նվազագույնը կազմել է 256,4 լարի, մինչդեռ, 2023 թվականի հունվարին, այս ցուցանիշը կազմում էր 256,9 լարի:

Ծառայության փոխանցմամբ՝ 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 2023 թվականի փետրվարին աշխատունակ տարիքի տղամարդու կենսաապահովման նվազագույնը ավելացել է 25,6 լարիով: 2022 թվականի փետրվարին կազմել է 231,3 լարի: Ընդ որում, միջին օգտագործողի կենսաապահովման նվազագույնը փետրվարին սահմանվել է 227,1 լարի, հունվարին՝ 227,5 լարի, իսկ 2022 թվականի փետրվարին՝ 204,9 լարի:

Ի դեպ, կենսաապահովման նվազագույնը որոշվում է նվազագույն պարենային զանրուղիի հիման վրա: Նվազագույն պարենային զանրուղը պարենային ապրանքների սահմանված նորմատիվ զանրուղ է, որը պարունակում է աշխատանքային տարիքի մարդու բնականոն կյանքի և աշխատունակության համար ֆիզիոլոգիապես անհրաժեշտ սննդի քանակը, դրա բաղկացուցիչ տարրերը:

ԴԻՉԵԼԱՅԻՆ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԸ ԿԵԺԱՆԱՆԱ, ԲԱՅՅՑ ԲԵՆՉԻՆԻ ԳԻՆԸ ԿՊԱՇՊԱՆՎԻ

ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԵՎԱ ԿԹԱՆԿԱՆԱՆ

Ինչպես «Վրաստանի» հետ գրույցում նշեց Նավթամթերքների ներկրողների միության նախագահ Վախտանգ Իորաշվիլին՝ դիզելային վառելիքային սպառողական գինը կնվազի, բայց բենզինի գնի նվազեցում չի վավերացվի:

- Այսօրվա դրությամբ, Թբիլիսիում և երկրի ծավալով առանձին բենզալցակայաններում բենզինի գինը տատանվում է 2,10-2,15 լարիի սահմաններում, և այդ գնի պահպանումը, առավել ևս՝ նվազեցումը, մեծապես կախված է ներկրման հնարավոր ռեսուրսների ապահովման հետ, - հայտարարեց Վախ-

տանգ Իորաշվիլին: Նրա խոսքով, Վրաստանում դիզելային վառելիքային առկա պաշարները, ինչպես դրա ներկրման հստակեցման ուղիները, թույլ են տալիս արդեն այսօր նվազեցնել դիզելային վառելիքային սպառողական գինը: Իսկ ինչ վերաբերում է ավտոմեքենաներին, ապա, ինչ-

պես արդեն հաղորդել ենք, 2024 թվականից Վրաստանը կարգելի մինչև 2013 թվականը թողարկած ավտոմեքենաների ներկրումը, թեև արգելքը չի վերաբերի Վրաստանի տարանցմամբ երրորդ երկրներ մեքենաների արտահանմանը:

Վերոնշյալ կանոնակարգը արդեն ազդեցություն է գործել երկրի ավտոմեքենային շուկայի գարգացումների վրա: Ավտոմեքենա ներկրողների միմասը համոզված է, որ ներկրվող մեքենաների թվաքանակ-

կի նվազեցումը կհանգեցնի գների ավելացման:

Ավտոմեքենաների բիզնեսով զբաղվող «Գալտ Էնթ թագարդ» ընկերությունում նշեցին, որ 2022 թվականին, 2019 թվականի համեմատ, օգտագործված մեքենաների գներն ավելացան 47 տոկոսով, իսկ նոր մեքենաներինը՝ 15-20 տոկոսով: Ինչպես ասացին ընկերությունում գների ավելացումը պայմանավորված է մեքենաների փոխադրման հետ կապված ծախսերի ավելացումով: